10.57192/18291864-2024.4-35

Գևորգ Ս. Խուդինյան
Պատմ. գիտ. դոկտոր

orcid 0009-0002-5922-6875

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Մաս վեցերորդ: ՀՅԴ կապերն ու հարաբերությունները Իրանի պետական շրջանակների ու հեղափոխական ընդհատակի հետ՝ Սահմանադրական հեղափոխության եզրափակիչ փուլում*

Բանալի բառեր – հեղափոխական ընդհատակ, Թուրքիա, Պարսկաստան, Եփրեմ Դավթյան, Սեյիդ Հասան Թաղիզադե, Էմին Ռասուլզադե, Էնվեր բեյ, Օդեսա, Ուիլյամ Մորգան Շուստեր:

Մուտք

Պարսկաստանում 1907 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումներից և Օսմանյան կայսրությունում 1908 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո նկատելիորեն ընդլայնվեց ՀՅ Դաշնակցության քաղաքական դերակատարությունը Իրանի ու Թուրքիայի ներքաղաքական գործընթացներում:

Այս սկզբունքորեն նոր կացության մեջ, երբ Կ. Պոլիսը հայտնվել էր հեղափոխական կարգախոսներով քողարկվող միջազգայնականության պրոֆանացիայի մթնոլորտում, պարսիկ սահմանադրականները մտածում էին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն իրական ա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 30.12.2024 :

ջակցություն ցուցաբերելու մասին: Նման իրավիճակում հենց Պարսկաստանն էր դառնում քաղաքական այն գործելադաշտը, որը նախընտրելի էր ինչպես Ռուսաստանից, այնպես էլ եվրոպական երկրներից ժամանող հեղափոխականների համար: Անշուշտ, Թեհրանում հակահեղափոխականների ժամանակավոր հաղթանակից գրեթե մեկ տարի անց՝ 1908 թ. հուլիսին թուրքական «Հուրիեթի» առաջ բերած ոգևորությունը որոշակի ազդեցություն էր գործում հակաշահական դիմադրության նոր կենտրոնի վերածված Թավրիզի պաշտպանների վրա: Բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նրանց համար նույնպես «թուրք ընկերներից» լուրջ օգնություն ակնկալելն անիմաստ է և նույնիսկ վտանգավոր: Պատճառն այն է, որ 1905–1907 թվականներին թուրքական զորքերը հասցրել էին ռազմակալել Պարսկաստանի սահմանամերձ գավառները, իսկ 1908–1909 թվականների ձմռանը հակահեղափոխականների կողմից պաշարված Թավրիզում թուրքական հյուպատոսը փորձում էր իր կողմը գրավել ապստամբների առաջնորդ Սաթթար խանին: Բայց քանի որ դաշնակցական Եփրեմ Դավթյանի ոչ մեծ զորաջոկատի 1909 թվականի փետրվար–հունիսյան արշավանքի ծանրությունը հիմնականում ընկավ հայ մարտիկների ու մի խումբ կովկասցիների ուսերին, բռնակալ շահից ազատված Թեհրանը վերականգնեց իր առաջնությունը, իսկ Թավրիզը համահրանյան պայքարից շեղելու փորձերը փակուղի մտան: Առավել ևս, որ Թեհրանի մատույցներում Եփրեմ Դավթյանի զորաջոկատին միացավ նաև բախտիարների[1] ցեղախմբի հակաշահական տրամադրություններ ունեցող հատվածը: Ուստի ի տարբերություն Թուրքիայում բանակի միջոցով կազմակերպված պետական հեղաշրջման՝ Պարսկաստանում հեղափոխական կերպարանք ստացող պայքարը արժանացավ միջազգային հեղափոխական շրջանակների ավելի մեծ ուշադրությանն ու աջակցությանը:

Ներկայումս Իրանում ընթացող ներքաղաքական գործընթացների լույսի ներքո արդիական նշանակություն է ձեռք բերում ինչպես Սահմանադրական հեղափոխության հարուստ փորձի, այնպես էլ նրանում ակտիվ մասնակցություն ունեցած հայ հեղափոխականների գործունեության համակողմանի ուսումնասիրությունը: Կարևոր է նաև Իրանի նման բազմազգ երկրի առաջընթացը ներքին միասնության ու տարածքային ամբողջականության պահպանման հետ զուգորդելու պարսկական նուրբ աշխատակարգերի քննությունը: Խիստ ուսուցողական առաջադրանք է տարբեր ազգեր ներկայացնող հեղափոխականների՝ Իրանի պետականությանն ու ժողովրդին ցուցաբերած աջակցության պրոցեսում կողմերից յուրաքանչյուրի

[1] **Բախտիարներ** – Պարսկաստանի հարավ-արևմուտքում բնակվող խոշոր ցեղախումբ, որն աչքի էր ընկնում իր ազատատենչ ոգով:

ունեցած ակնկալիքների բացահայտումը: Քանզի ներկայումս ներքաղաքական լուրջ գործընթացների շեմին կանգնած Իրանում նկատվում են ինչպես Սահմանադրական հեղափոխության առաջին տարիները հիշեցնող սուր կատակլիզմներ, այնպես էլ ժամանակի պահանջներով թելադրվող՝ խաղաղ ու անցնցում բարեփոխումների հնարավորություններ:

1. Թուրքիայի փոխարեն Պարսկաստան

Պատահական չէ, որ Իրանի Սահմանադրական հեղափոխության համար բեկումնային նշանակություն ունեցած իրադարձությունների նախօրեին ՀՅ Դաշնակցության ներսում բանավեճ էր ծավալվել նաև Թուրքիայում շարունակվող ներքաղաքական պայքարին կուսակցության մասնակցության նպատակահարմարության վերաբերյալ: Այդ առումով առանձին դաշնակցական կառույցներում նկատվող ոգևորության մթնոլորտի վրա ամեն անգամ սառը ջուր էր լցնում կուսակցության բազմափորձ առաջնորդ Ռոստոմը, ով համառորեն կասեցնում էր իր ընկերների հեղափոխական ակտիվությունը Թուրքիայում: Անգամ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ կոնգրեսում (1907 թ. դեկտեմբեր) Իթթիհատի հետ ձեռք բերված որոշակի պայմանավորվածություններից և նույնիսկ 1908 թ. հուլիսին տեղի ունեցած զինվորական հեղաշրջումից հետո էլ իրեն բնորոշ «ձիու բնազդով» Ռոստոմը զգում էր մոտալուտ վտանգները: Ուստի նա անընդհատ հակազդում էր համաօսմանյան հեղափոխական պայքարին միանալու հարցում արմատական կերպով տրամադրված ՀՅԴ Վասպուրականի կենտրոնական կոմիտեի ջանքերին:

Դեռևս ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովից վերադառնալուց հետո Թիֆլիսում հանդիպելով Վանա Իշխանի (Նիկոլ Պողոսյան (1883–1915) հետ՝ Ռոստոմն այդ թեմայով մի ընդարձակ նամակ էր գրել Վասպուրականի ընկերներին: Իսկ պարսիկ սահմանադրականների հետ բանակցությունների մեկնելուց առաջ, Թադեի վանքում գտնվող Ռոստոմն իր առարկությունները ներկայացնելու խնդիրը հանձնարարել էր նույն Վանա Իշխանին, ով մի քանի օր անց՝ 1908 թ. նոյեմբերի 9-ին, վերադառնալու էր Վան: Արձանագրելով, որ Թուրքիայում «գաղափարական թիւրքերը մատներով պիտի համրուեն[2]», Ռոստոմը կարծում էր, որ ՀՅԴ բախտը համաօսմանյան հեղափոխական պայքարի հետ կապել՝ «նշանակում է խեղդամահ

[2] «Ռոստոմի անտիպ նամակները», հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ **Երուանդ Փամպուքեանի**, Եր., «Լուսակն», 2012, էջ 577:

անել մեր գործը ոչ միայն ազգային, այլ ընդհանուր յեղափոխական տեսակէտից[3]»:

Հայկական հարցը «օսմանեան ներքին յեղափոխութեամբ»[4] լուծելու օգտին հանդես եկող Վասպուրականի երիտասարդ գործիչներին Ռոստոմի հայտնած սկզբունքային անհամաձայնությունը կապված չէր միայն այն իրողության հետ, որ ի տարբերություն Օսմանյան կայսրության, Պարսկաստանում հայերն առանձին ազգային խնդիր չունեին: Ավելի ուշադիր դիտարկումը ցույց է տալիս, որ Ռոստոմի կողմից համաօսմանականության մերժումն է՛լ ավելի կոնկրետ ու տեսանելի շարժառիթներ ուներ: Տարաձայնությունների անմիջական պատճառը Սոցիալիստական ինտերնացիոնալի կողմից առաջադրված **համերաշխության սկզբունքի** հայկական ու թուրքական ընկալումների տարբերության մեջ էր. «Համերաշխութիւնը պիտի կայանայ յեղափոխական հողի վրայ. ոչ թէ մենք պէտք է իջնէնք դէպի թիւրքերի պահանջները, որոնք հետեւանք են թիւրք շովինիստական հոսանքի, այլ թիւրք կոչւած յեղափոխականներին բարձրացնենք – դնենք յեղափոխական հողի վրայ»[5] ,– եզրակացնում էր Ռոստոմը:

Ավելին, ՀՅ Դաշնակցության համար պարսիկ սահմանադրականների հետ համերաշխության հաստատման անհրաժեշտությունը կապված էր ոչ միայն Սոցիալիստական ինտերնացիոնալին կուսակցության անդամակցության փաստից բխող՝ Արևելքի ժողովուրդների հեղափոխականացման խնդրի հետ: Պարսկաստանում առկա էր նաև երկու ժողովուրդների քաղաքակրթական հոգեհարազատության գործոնը, որը բացակայում էր Թուրքիայում: Ուստի հայ հեղափոխականների համար աջակցել պարսիկներին՝ նշանակում էր նրանց դնել զարգացման, առաջադիմության ուղու վրա: Հետագայում՝ 1910-ի հունվարին, Թավրիզում արտասանած իր ճառում Եփրեմ Դավթյանը է՛լ ավելի էր խորացրել կուսակցության առաջնորդի այս հարցադրումը: Նա նկատել էր, որ անգամ օտար պետությունների կողմից Պարսկաստանի անկախությունը չհանդուրժելու պարագայում «**պետութիւնները կարող են ոչնչացնել սահմանները**, **բայց ո՛չ երբէք պարսիկ ժողովուրդը** (ընդգծումը Եփրեմինն է – Գ. Խ.): Մենք միշտ պիտի մնանք իրար մօտ, կողք-կողքի, սա մի ճակատագրական անհրաժեշտութիւն է, նրանց զարգացումը մասամբ մերն է[6]»:

Ավելին, արտաքին արևելումների առումով Պարսկաստանի քաղաքական դաշտում առկա ջրբաժանը գտնվում էր ոչ թե Ռուսաստան-Թուրքիա,

---

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 577:

[5] Նույն տեղում, էջ 576:

[6] Հ. Յ. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ), Ա հատ., ուսումնասիրեց և խմբագրեց՝ **Ա. Ամուրեան**, Թեհրան, տպարան «Ալիք», 1976, էջ 13:

այլ Եվրոպա – Ռուսաստան հարթության վրա, որոնցից առաջինի հետ էին իրենց հույսերը կապում պարսիկ սահմանադրականները: Ըստ այդմ՝ Պարսկաստանի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ գումարման մեջլիս-ներում առկա էին երկու խոշոր կուսակցական խմբավորումներ՝ դեմոկ-ռատներն ու չափավորները: Հայտնի է, որ 1907 թվականի վերջերին – 1908 թ. հունվարի առաջին օրերին Թեհրանում Ռոստոմը բանակցել է առաջին մեջլիսի փոխնախագահ **Վոսուղ-ադ-Դոուլեի** դեմոկրատական խմբակ-ցության ներկայացուցիչների հետ: Նախքան 1908 թ. հունիսի 22-ի պետա-կան հեղաշրջումը գործած այդ խմբակցության պառակտումից հետո Վո-սուղ-ադ-Դոուլեի և իր ազգական, իշխան Ֆիրուզ Միրզայի գլխավորութ-յամբ ստեղծվեց «Թեշքիլի» խմբակցությունը, որն անգլիական կողմնորո-շում ուներ: Բայց Պարսկաստանում այդպես էլ հեղհեղուկ վիճակում մնա-ցած այդ խմբակցության առաջնորդը հետագայնում հրաժարվեց ներքա-ղաքական պայքարից, զբաղեցրեց բարձր պաշտոններ և հասավ անգամ կառավարության ղեկավարի աթոռին:

Պարսկաստանում անգլիացիների քաղաքականությունը նույնպես խիստ հեղհեղուկ էր: Նրանք մե՛կ համագործակցում էին ռուսների հետ՝ աշխարհաքաղաքական ստատուս-քվոյի հիմքը համարվող Պարսկաս-տանն ազդեցության գոտիների բաժանելու 1907-ի համաձայնագիրը կյան-քի կոչելու համար, մե՛կ էլ՝ բոլոր հետադիմական ուժերի մոլեռանդ պաշտ-պան ցարական Ռուսաստանի դեմ էին տրամադրում պարսիկ հեղափո-խականներին ու Պարսկաստանում գտնվող օտարերկրացիներին:

Պարսկաստանի մեջլիսի դեմոկրատական խմբակցության՝ կուսակ-ցության վերածվելու գործընթացն իր տրամաբանական ավարտին հասավ 1908 թ. հունիսի 22-ի պետական հեղաշրջումից հետո երկրից աքսորված ու Քեմբրիջի համալսարանում դասավանդող թավրիզեցի **Սեյիդ Հասան Թաղիզադեի** (1878-1970) գործունեության արդյունքում: Դա 1909 թ. հունի-սից մինչև հոկտեմբեր տևած նոր իշխանության ձևավորման շրջանն էր, երբ երկրի ազատագրման գործում Ջուզեպպե Գարիբալդիի հեղափոխական գործառույթները ստանձնած Եփրեմ Դավթյանի հաղթա-կան ջոկատը, մտնելով մայրաքաղաք, ճանապարհ էր բացել Պարսկաս-տանի երկրորդ գումարման խորհրդարանի ընտրության համար: Նրանում Ferqeh-ye Demokrat-e Iran (Իրանի Դեմոկրատական կուսակցություն) խորհրդարանական խմբակցության առաջնորդը դարձավ Սեյիդ Հասան Թաղիզադեն: Ահա այս շրջանից է, որ Պարսկաստանում գործող բազ-մազգ հեղափոխական ընդհատակը ՀՅ Դաշնակցությանն ու նրա առաջ-նորդներին սկսեց դիտարկել որպես այդ երկրի ներսում ծավալվող ներքաղաքական գործընթացների ռազմաքաղաքական երաշխավորներ: Դա պայմանավորված էր նրանով, որ Թավրիզի պաշտպանության գոր-

ծում Ռոստոմի ու նրա շուրջ համախմբված դաշնակցականների ցուցաբերած անշահախնդիր աջակցությանը գումարվել էին Թեհրանի ազատագրության փաստն ու նրա ոստիկանապետի, բայց փաստորեն ողջ Պարսկաստանի ներքին գործոց նախարարի գործառույթներն իրականացնող Եփրեմ Դավթյանի քաղաքական կշիռն ու հեղինակությունը: Մինչդեռ ի տարբերություն դաշնակցականների ու Պարսկաստանի շահերին հավատարիմ մնացած Սեյիդ Հասան Թաղիզադեի նման թավրիզեցի ազերիների՝ Բաքվից Իրան անցած կովկասյան թաթարներին ներկայացնող գործիչները կրկնակի ինտրիգներ էին հյուսում Պարսկաստանի Սահմանադրական հեղափոխության թիկունքին:

2. Կովկասյան թաթարների տարօրինակ զորաշարժի պատճառները

Թեև Պարսկաստանում կուտակված խայտաբղետ հեղափոխական ընդհատակի՝ կովկասյան թաթարներնին ներկայացնող հատվածի գործողությունները խրախուսվում էին Սոցիալիստական ինտերնացիոնալի կողմից, բայց վերջիններիս իրական տերերը գտնվում էին Անդրկովկասի քաղաքներում՝ Թիֆլիսում ու Բաքվում: Այդ ընդհատակի շարքերում առկա իրանցիների մի մասը նույնպես ժամանակին Բաքվի նավթահանքերում աշխատելու ընթացքում տեղի սոցիալ-դեմոկրատների հետ կապված անհատներն էին, որոնք անդամակցել էին «Հումմեթ» կազմակերպությանը, իսկ հայրենիք վերադառնալուց հետո կազմել էին ոչ մեծ խմբեր: Այսպես՝ դեռևս 1906 թվականին Թավրիզում ստեղծվել էր իբրև սոցիալ-դեմոկրատներ հանդես եկող մի ոչ մեծ խմբակ՝ **Ալի Մոսյուի** գլխավորությամբ: Հետագայում՝ 1909 թվականին, այս խմբակը դիմեց անգամ Սոցիալիստական ինտերնացիոնալի բյուրոյին՝ ձայնի իրավունք ստանալու համար: Թավրիզի պաշտպանությանն ակտիվորեն մասնակցելու արդյունքում նրանց ուժերին ու հնարավորություններին քաջածանոթ Ռոստոմը 1909 թ. դեկտեմբերին Միքայել Վարանդյանին գրած նամակում տեղեկացնում էր, որ «Իմ ժամանակս նրանք երկու մասի էին բաժանուած, իրարու սաստիկ հակառակ: Իսկական սոց[եալ] դեմոկրատներ[ը] դրսից եկողներն էին: Տեղացիները, այդ անուան տակ, հասկանում էին ոչ-դաշնակցական յեղափոխականներին: Պէտք է ասել, որ դրսից եկած կռուողները բոլորն էլ իսկապէս սոց[եալ] դեմոկրատներ չէին, այլ նրանց մէջը կային Էս Էր-ներ եւ անկուսակցականներ: Այդ անունը կրում էին, որովհետև նրանց ուղար-

կող Թիֆլիզի թիւրք կոմիտէն այդպիսի պայման էր դրել»[7]: Նման իրողությունը Ռոստոմը բացատրում էր նրանով, որ «Ընդհ. տրամադրութիւնն էր բարձրացնել սոց. դեմոկրատիայի անունը, իբրև մի կուսակցութեան, որ հակառակորդ է ճանաչուած Դաշնակցութեան[8]»: Ռոստոմը նաև անհանգստություն էր հայտնում, որ Թավրիզում գործող սոցիալ-դեմոկրատների խմբակը Սոցիալիստական ինտերնացիոնալի մոտակա՝ Կոպենհագենի կոնգրեսին դիմելու հարցում առաջ է անցել ՀՅԴ-ից, որը 1907-ին Շտուտգարտում ձայնի իրավունք էր ստացել սոսկ որպես ռուսական էսեռների կուսակցական ֆրակցիայի մաս: Հարկավոր էր նույնպիսի ձայն ստանալ նաև Օսմանյան կայսրությունում գործող ՀՅԴ կառույցի համար, ուստի Ռոստոմը կշտամբում էր Մ Վարանդյանին՝ «մեր ձայնի խնդիրը ականջի ետև չձգես, առաջուայ նման[9]»:

Սրանից ակնհայտ է դառնում, որ Թավրիզում կովկասյան թաթարներին ներկայացնող սոցիալ-դեմոկրատների ու նրանց տեղացի գործընկերների ակտիվացումը կապված էր մի կողմից՝ Ռուսաստանում դատական գործընթացների մեջ ներքաշված ՀՅ Դաշնակցության քայլերը հակակշռելու՝ Ոստիկանության դեպարտամենտի ցանկության, իսկ մյուս կողմից՝ ՀՅԴ ուսերի վրայով Սոցիալիստական ինտերնացիոնալ թափանցելու մտադրության հետ:

Սակայն Կովկասից ժամանած հեղափոխականները որոշակի թիվ էին կազմում նաև Կասպից ծովի ափամերձ քաղաքներում (Ռեշտ, Էնզելի և այլն), որտեղ գտնվում էին ռուսաստանցի մեծահարուստների, այդ թվում՝ հայազգի Լիանոզովների ձեռնարկությունները: 1909 թվականից Գիլանի քաղաքներում գործող փոքրաթիվ սոցիալ-դեմոկրատներին էր միացել վրացի նշանավոր հեղափոխական **Գեորգի (Սերգո) Օրջոնիկիձեն**, իսկ ահա դեպի Թեհրան արշավող հայ և վրացի մարտիկների թիկունքում թաքնված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ապագա հիմնադիր **Էմին Ռասուլզադեն** Պարսկաստան էր ժամանել բոլորովին այլ նպատակներով:

2011 թվականին ադրբեջանական պատմաշինարարության խոսափող «Զերկալո» թերթում տպագրված ոմն Նասիման Յաղուբլուի[10] հորինվածքից տեղեկանում ենք, թե իբր՝ որպես Բաքվի «Թարրագի» («Առաջադիմություն» թերթի թղթակից հանդես եկող Ռասուլզադեն գլխավորել է իրանցի հե-

[7] **Ռոստոմ**, Նամականի: Մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 467-468:
[8] Նույն տեղում էջ 468:
[9] Նույն տեղում:
[10] **Ягублу Н.**, Деятельность Мамед Эмина Расулзаде в Иране, «Зеркало», Баку, 2011, 28 мая , с. 42.

ղափոխականների 1909 թվականի փետրվար-հունիսյան հերոսական արշավանքը Ռեշտից՝ Թեհրան. «Մ. Է. Ռասուլզադեն Իրանական հեղափոխության սկզբնական փուլում իր Բաքվի ազատասեր իրանցի ընկերների հետ միասին արշավանք ձեռնարկեց դեպի Ռեշտ քաղաք: Այն նույն թվականին, երբ Թեհրանը գրավվեց, նա ժամանեց Իրանի մայրաքաղաք»[11]*: Նման ցնդաբանության հեղինակներին, անշուշտ, հայտնի է, թե իրականում ո՞ւմ ուսերին էր ընկած 1909-ի փետրվար-հունիսյան արշավանքի ծանրությունը, ուստի դաշնակցական Եփրեմ Դավթյանի ու նրա ոչ մեծ զորաջոկատի մյուս մարտիկների անունները պատմությունից ջնջելու համար նրանք հորինում են այսպիսի հեքիաթներ: Այդ պատճառով ադրբեջանցի պատմաշինարարները ու նրանց ռուսապտանցի գործընկերները հսկայական աշխատանք են կատարել տարբեր տեղեկատվական հարթակներում, այդ թվում՝ «Վիքիպեդիայում», ուր «**Իրանի Սահմանադրական հեղափոխություն**» հոդվածի բուն շարադրանքում բացակայում է անգամ նրա գլխավոր հերոսի անունը:*

Ի տարբերություն ադրբեջանցի պատմաշինարարների, որոնց թեթև ձեռքով կարելի է հորինել ցանկացած «պատմություն», մեզ համար ակնհայտ է, որ 20-րդ դարի սկզբներին Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին անդամակցած կովկասյան թաթարների ազգային ինքնագիտակցությունը դեռևս չէր հասել այն մակարդակին, որ նրանք կարողանային հստակորեն ձևակերպել անգամ սեփական շահերը: Ուստի թափանցելով Իրան՝ նրանց հատուկենտ ներկայացուցիչները հիմնականում կատարում էին ցարական Ոստիկանության դեպարտամենտի հրահանգները: Իսկ Թիֆլիսում ու Բաքվում սեփական կառույցներն ունեցող այսպես կոչված՝ «Մուջահեդների կուսակցությունը» հաճախ հենց Անդրկովկասից էր հրահանգներ ուղարկում Պարսկաստան:

Ժամանակի ընթացքում սոցիալ-դեմոկրատական «Հումմեթ» կազմակերպության անդամ կովկասյան թաթարները սկսեցին սպասարկել նաև երիտթուրքերի քաղաքական պատվերները: Այդ նպատակով արդեն օգտագործվում էր հակառակ փաստարկը՝ 1907 թ. անգլիացիների հետ կնքված պայմանագրով Պարսկաստանի հյուսիսն իբրև սեփական ազդեցության գոտի ամրագրած ցարիզմի դեմ պայքարի խնդիրը: Այդ տարօրինակ «փոխատեղումները» համոզիչ դարձնելու նպատակով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հեղաշրջումից հետո կովկասյան թաթարները հաճախ դիմում էին ՀՅ Դաշնակցությանը՝ Եվրոպայում նրա ունեցած կապերն օգտագործելու համար:

[11] Նույն տեղում:

1909 թվականից հետո Իրանում ՀՅ Դաշնակցության հեղինակությունն այնքան էր բարձրացել, որ Եփրեմ Դավթյանի հետ կապերի հաստատման փորձերի հետ միասին՝ կովկասյան թաթարների առաջնորդներ Ա. Աղաևն[12] ու Կ. Կարաբեկովը[13] բանակցությունների մեջ էին մտել նաև Ռոստոմի հետ՝ հայերի ու թյուրքական ժողովուրդների միջև երկխոսություն սկսելու համար առաջարկելով հիմնել 16 էջանոց հայերեն-թուրքերեն ամսագիր: Ռոստոմն իր 1909 թ. նոյեմբերի 14-ին գրած նամակում նկատում էր, որ ամսագիրը նվիրված է լինելու «Թիւրքիայի, Կովկասի, Իրանի համերաշխութեան գործին»[14], ուստի՝ «Եթէ մեծ օգուտ չտայ, վնաս չի լինիլ յամենայն դէպս, մանաւանդ որ նիւթական շատ քիչ զոհողութիւն կը պահանջի, իսկ յաջողութեան դէպքում (եթէ միայն 1000 օրինակ ցրուելու լինի), դեռ օգուտ էլ կը մնայ» [15]:

Բայց այդ ձեռնարկի կապակցությամբ առանձնակի հույսեր չփայփայելով՝ արդեն 1909 թ. դեկտեմբերի 1-ին ՀՅԴ ԱՄՆ-ի ԿԿ-ին գրած նամակում Ռոստոմը խոսում էր «Քրիստոնեաներու եւ մահմետականներու համերաշխութեան քարոզի համար»[16] խոսակցական թուրքերենով ամսագիր հրատարակելու մասին, որը կունենա մեկական դաշնակցականից, երիտթուրքից ու «Կովկասի թիւրք յեղափոխականներից»[17] բաղկացած խառը խմբագրակազմ: Այսինքն՝ հայերեն-թուրքերեն ամսագրի փոխարեն առաջ էր քաշվում թուրքերի շրջանում քարոզչության իրականացման նպատակ ունեցող ամսագիր հիմնելու խնդիրը:

Կովկասյան թաթարների հայտնի պարագլուխների մոտ արձանագրված նման տարօրինակ շրջադարձը Ռոստոմը բացատրում էր նրանով, որ նրանք նկատել էին Կովկասից եկած թաթար գործիչների հանդեպ հայկական կողմի մոտ առկա խորն անվստահությունը: «Ա-

[12] **Աղաև** կամ՝ **Աղաօղլու Ահմեդ բեկ** (1869-1939) - ծնվել է Շուշիում: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ եղել է «Դեֆայի» կազմակերպության հիմնադիրներից մեկը: Այնուհետև մասնակցել է «Թյուրք օջաղների» ստեղծմանը՝ Ստամբուլում, որտեղ էլ անդամակցել է Իթթիհատին: Մասնակցել է թուրքական բանակի 1918 թվականի արշավանքին դեպի Բաքու: Եղել է Ադրբեջանի, այնուհետև՝ Թուրքիայի խորհրդարանների պատգամավոր և անգամ՝ արտաքին հարցերով Քեմալ Աթաթուրքի խորհրդական: Մահացել է Թուրքիայում

[13] **Կարաբեկ Իսմայիլ օղլի Կարաբեկով**- (1874-1953)-ծնվել է Ելիզավետպոլի նահանգի Զագյամի (Զեկամ) տեղամասի գյուղերից մեկում (այժմ՝ Շամխորի շրջան): Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ «Դեֆայի» կազմակերպության ղեկավարներից էր: 1917-ին դարձել է Ադրբեջանի Իթթիհատ կուսակցության հիմնադիրն ու խորհրդարանի պատգամավորը: Մասնագիտությամբ բժիշկ էր: Խորհրդային շրջանում ազատորեն ապրել ու մահացել է Սամարղանդում:

[14] **Ռոստոմ**, Նամականի: Մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 463:

[15] Նույն տեղում:

[16] Նույն տեղում էջ 464:

[17] Նույն տեղում:

ղաեւի, Կարաբէկովի հետ սկսուած մեր բանակցութիւնների բնոյթը փոխուեց: Նրանք նկատեցին երեւի, որ մեր կողմից կասկած կայ դէպի իրենց յեղափոխական համաձայնութիւնը[18]»– եզրակացնում էր Ռուստոմը՝ Մուշում գտնվող Սիմոն Զավարյանին ուղղված անթվակիր նամակում:

Մի կողմից՝ երիտթուրքական հեղաշրջման, իսկ մյուս կողմից՝ Եփրեմ Դավթյանի հաղթանակների ու շահի փախուստի առաջացրած ոգևորության մթնոլորտն այնպիսին էր, որ մի պահ նախատեսվում էր անգամ Թավրիզում ձևավորել միասնական կազմակերպություն՝ խառը կոմիտե: Այդ մասին է վկայում Ռոստոմի մեկ այլ՝ 1910 թ. նոյեմբերի 19-ի նամակը Սիմոն Զավարյանին. «Վաղը կը հասնի Կարաբէկովը: Գնում է Թաւրիզ՝ ղեկավարելու համար այնտեղի գործերը: Պիտի կազմուի խառը կոմիտէ մերոնցից և նրանցից: Մի քիչ կասկածում եմ յաջողութեանը աչքի առջեւ ունենալով Կարաբ[էկովի] անձնաւորութիւնը (անհամբեր է, բարկացկոտ) եւ Թաւրիզի մթնոլորտը: Բայց մասնակցել հարկաւոր է»[19]:

Այս շարունակական կասկածների հիմքում ընկած էր ոչ այնքան հայ-թաթարական ընդհարումների շրջանից պահպանված խորն անվստահությունը, որքան այն իրողության գիտակցումը, որ նույնիսկ Անդրկովկասում խիստ սահմանափակ քաղաքական օրակարգ ունեցող կովկասյան թաթարների ակտիվացումը Պարսկաստանում պայմանավորված է երրորդ ուժի, տվյալ պարագայում՝ Ռուսաստանում դաշնակցականների իսկական որս սկսած Ոստիկանության դեպարտամենտի թելադրանքով:

Սահմանադրական հեղափոխության 1909 թ. տպավորիչ հաղթանակներից հետո որպես խմբագիր Թեհրանում հաստատված՝ կովկասյան թաթարների մյուս առաջնորդը՝ Էմին Ռասուլզադեն նույնպես փորձում էր կապեր հաստատել դաշնակցական գործիչների, առաջին հերթին՝ Եփրեմ Դավթյանի հետ: Ու թեև արտաքուստ նա հանդես էր գալիս որպես Սահմանադրական հեղափոխության խոսափողը դարձած «Իրան նոու» թերթի խմբագիր, բայց դրա հետ միասին՝ փորձում էր ակտիվացնել պանթյուրքական տրամադրություններ ունեցող տարրերին, ինչն, իր հերթին, կասկածներ էր առաջացնում պարսիկ հեղափոխականների շրջանում:

---

[18] Նույն տեղում, էջ 475:
[19] Նույն տեղում, էջ 515:

Ճիշտ նույն գործելակերպն էին որդեգրել նաև Բաքվի սոցիալ-դեմոկրատները, որոնք ցանկանում էին իրենց հակակշռի տակ պահել Պարսկաստանում «Սաթթար», «Ջհանգիր», «Բարդ» և այլ անվանունների ներքո ստեղծվող հեղափոխական կոմիտեները: Այսպես՝ Եփրեմ Դավթյանի Թեհրանի ոստիկանապետ դառնալուց մի քանի ամիս անց՝ 1909 թ. հոկտեմբերի 1-ին նրա մերձավոր զինակիցներից՝ դաշնակցական Միսակ Ղազարյանը տեղեկացնում էր. «Երեք օր առաջ «Բարդ»-ի ընկերներից մէկն ինձ ասաց, որ Բագուի Ս. դ.-ական մարմինը ուղարկել է **իր կնիքը** Ջհանգիրի համար հետևեալ մակագրութեամբ՝ **Ս. դ. – ական «Ջհանգիր» Իրանի յեղափոխական կոմիտէին**» և մերժել նրա Կ. կոմիտէ լինելը, նոյն իսկ կնիքը տպւել է մի կտոր թղթի վրայ և խոստացաւ ինձ ցոյց տալ: Այդ բանը ինձ չափազանց զարմացրեց, ի՞նչ կապ ունի Թեհրանի «Ջհանգիր»-ը Բագւայ Կենտրոնական Ս. Դ. – եանի հետ, չէ՞ որ տարբեր ուղղութեան մարմիններ են»[20]:

Դժվար չէր նկատել, որ ինչպես Բաքվից եկող ուղղակի թելադրանքի, այնպես էլ կովկասյան թաթարների ու վրացիների տարօրինակ «գործուղումների» թիկունքին կանգնած էր ցարական բռնապետությունը, որն անհանգստացած էր Իրանի վերածննդի հեռանկարով: Քանզի նրա պաշտոնյաների համար ակնհայտ էր, որ ինչպես Անդրկովկասից ժամանող թաթարներն ու վրացիները, այնպես էլ Իրանում պանթյուրքական տրամադրություններ սերմանող երիտթուրքերն օբյեկտիվորեն ծառայում էին Սահմանադրական հեղափոխության ներսում պառակտում առաջացնելու գործին: Պատճառն այն է, որ հեղափոխության եզրափակիչ հանգրվանում Ղաջարների շահական իշխանության հենարանը նրան հավատարիմ մնացած թուրքմենական ցեղախմբերն էին, որոնց կողքին կարևոր էր Ատրպատականի ու նրան հարող գավառների թյուրքալեզուներին (ազարիներ, շահսևաններ) ներգրավելու խնդիրը: Այսինքն՝ **Իրանի վերածննդի հեռանկարները շրջափակելու և տապալելու հարցում ցարական մեծապետականության**, **թյուրքական ծագում ունեցող Ղաջարներից սերող Մուհամմեդ Ալի շահի ու պանթյուրքիստների նպատակները օբյեկտիվորեն համընկնում էին իրար:**

Բաքվից ուղղորդվող տարօրինակ խաղերին զուգահեռ՝ ակտիվացել էին նաև երիտթուրքերը, որոնք նույնպես աշխատում էին իրենց հակակշռի տակ վերցնել Իրանում ծավալվող հեղափոխական շարժումը: Ու

[20] Հ.Յ. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ), Ա հատ., ուսումնասիրեց և խմբագրեց՝ **Ա. Ամուրեան**, Թեհրան, տպարան «Ալիք», 1976, էջ 334-335:

քանի որ, այդ գործում նրանց մեծապես կարող էր խանգարել Թեհրանի ոստիկանապետ Եփրեմ Դավթյանի դիրքն ու հեղինակությունը, վերջիններս նույնպես փորձում էին սիրաշահել հայ հրամանատարին և իրենց նպատակների համար օգտագործել նրա ռազմական տաղանդը:

*Իրանահայության պատմության երկարամյա ուսումնասիրող **Անդրե Ամուրյանը (Հայկ Օհանյան)** ժամանակին ՀՅԴ Կենտրոնական արխիվում հայտնաբերել է երիտթուրք հայտնի պարագլուխ **Էնվեր բեյին** (հետագայում՝ **Էնվեր փաշա**) ուղղված Եփրեմ Դավթյանի պատասխան հեռագիրը, որով նա քաղաքավարի կերպով մերժում էր Թուրքիա գալու ու «միասին վարելու Թիւրքիայի սահմանադրական շարժումները[21]» հրավերքը: Սակայն Անդրե Ամուրյանն այդպես էլ չի հայտնաբերել նման մերժումի համար որպես հիմք ծառայած՝ Էնվերի հեռագիրը: Բայց նա ենթադրել է, որ խոսքը 1909 թվականի գարնան իրադարձությունների մասին է, երբ հարկ եղավ ճնշել սուլթան Համիդի ու նրա կողմնակիցների հակասահմանադրական ռևանշի փորձերը: Անդրե Ամուրյանի ենթադրությունը մեզ կասկածելի է թվում շատ պարզ պատճառով. Եփրեմ Դավթյանի պատասխան հեռագիրն ունի հետևյալ գլխագիրը՝ «Կոստանդնուպոլիս – Պատերազմական նախարարութեան, հաղորդելու համար Էնվեր Բէյին, **Տրիպոլիս** (ընդգծումը մերն է – Գ. Խ.)»[22]: Հայտնի է, որ 1911 թվականի աշնանը իտալական բանակի Լիբիա ներխուժելուց հետո այստեղ անհավասար մարտեր մղող օսմանյան զորքերի հրամանատարը հենց Էնվեր բեյն էր: Ուստի դեռևս ՀՅԴ-ի հետ դաշինքի մեջ գտնվող երիտթուրքերը զգում էին Պարսկաստանում արդեն մեծ հեղինակություն ձեռք բերած Եփրեմ Դավթյանի ու նրա դաշնակցական մարտիկների կարիքը: Բայց չպետք է մոռանալ նաև, որ 1911 թվականի վերջերին բավականին խորացել էին ՀՅ Դաշնակցություն-Իթթիհատ տարաձայնությունները, որոնք 1912 թվականի կեսերին հանգեցրին նրանց դաշինքի փլուզմանը: Սրանով հասկանալի է դառնում Եփրեմ Դաթյանի պատասխան հեռագրում Էնվեր բեյին ուղղված՝ «Ազատութեան հերոս»[23] դառնալու հետ միասին՝ նաև «Արդարութեան ախոյեանի» վերածվելու մաղթանքը: Այս կապակցությամբ Անդրե Ամուրյանի կողմից առաջ քաշված ենթադրությունը («կարծես Եփրեմն զգացել էր թե ի՞նչ պտուղ են իթի-*

---

[21] Նույն տեղում, էջ 160:

[22] «**Տրիպոլիս**»-ը կամ ուղղակի՝ **Տրիպոլի**-ն ոչ միայն երկրամասի, այլև կոնկերտ քաղաքի անվանում էր, որը հետագայում դարձավ Լիբիայի մայրաքաղաքը: Տվյալ պատմաշրջանում ներկայիս Լիբիայի տարածքը բաղկացած էր Օսմանյան կայսրության Տրիպոլիտանիա և Կիրենաիկա մարզերից, որոնց համար մղված իտալա-թուրքական պատերազմը տևել է 1911 թ. սեպտեմբերի 29-ից մինչև 1912 թ. հոկտեմբերի 18-ը:

[23] «**Ազատութեան հերոս**» տիտղոսին Էնվերն արժանացել էր 1908 թ. հուլիսի 10-ին թնդանոթների երեք համազարկերով ուղեկցված՝ Օսմանյան (Միդհատյան) սահմանադրության վերականգնման մասին ազդարարելու համար, որի իրական հեղինակն ինչպես արդեն նշել ենք՝ Գրիգոր Օտյանն էր: Ավելի մանրամասն տե՛ս մեր նախորդ հրապարակման («Վէմ», 2024, N 3), 62-րդ էջում:

հադականները յանձինս Էնվէրների»[24]) , մեր կարծիքով, նույնպես սրբագրման կարիք ունի, քանի որ 1911 թվականի աշնանը դաշնակցականներն արդեն ոչ թե զգացել, այլ համոզվել էին դրանում:

3. Սահմանադրական հեղափոխության մայրամուտը

Սահմանադրական հեղափոխության եզրափակիչ փուլում՝ 1910–1912 թվականներին[25] պարսիկ հեղափոխականների համար առավել վտանգավոր էր դարձել ոչ թե Պարսկաստանի ներսում, այլ նրա շուրջը ստեղծված կացությունը: Մինչ նրանք հերոսական մարտերով կասեցնում էին հետադիմական ուժերի վերադարձը, դեռևս 1907-ին երկիրը ազդեցության գոտիների բաժանման մասին համաձայնագիր կնքած ցարական Ռուսաստանն ու Բրիտանական կայսրությունը շտապում էին գետնի վրա ամրագրելու այդ իրողությունը: Սակայն հեղափոխության վերելքի շրջանում ցարական բանակի պարբերական ներխուժումներն ու հրապարակային կախաղանները որևէ արդյունք չէին տվել, իսկ Մուհամմեդ Ալի շահի կողմից ձեռնարկվող ռևանշի փորձերը ճնշվում էին Եփրեմ Դավթյանի ու նրա զինակից բախտիարների միացյալ ուժերով:

Բայց շահական իշխանության վերադարձի փորձերը համառորեն կասեցնող սահմանադրական-հեղափոխականներն իրենք էին հայտնվել սահմանադրական ծուղակի մեջ: Պարսկաստանի 1906 թ. սահմանադրության մեջ 1907 թվականի հոկտեմբերին կատարված բարեփոխումներից հետո էլ շահական իշխանությունը շարունակում էր գոյատևել որպես Իրանում ավանդաբար գոյություն ունեցող պետական ինստիտուտ: 1909-ի ամռանը փախուստի դիմած Մուհամմեդ Ալի շահի փոխարեն գահին էր բազմել նրա անչափահաս որդին՝ Սուլթան Ահմեդը: Այդ ընթացքում իրական իշխանությանը տիրացած մեջլիսը՝ իր երկու պալատներով՝ Սենատով և Ազգային ժողովով, բացառիկ իրավասություններ ուներ միայն երկրի ֆինանսները տնօրինելու հարցում[26]: Մնացած

[24] Հ.Յ. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ), Ա հատ., ուսումնասիրեց և խմբագրեց՝ **Ա. Ամուրեան**, Թեհրան, տպարան «Ալիք», 1976, էջ 160:

[25] Ըստ պատմագրության մեջ տարածում գտած տեսակետի՝ 1911-ի տարեվերջյան իրադարձություններով է ավարտվել Սահմանադրական հեղափոխությունը: Բայց մեր կարծիքով հեղափոխությունը շարունակվել է այնքան ժամանակ, քանի դեռ պատնեշի վրա էր նրա գլխավոր հերոսը՝ **Եփրեմ Դավթյանը**, ով զոհվեց 1912 թ. մայիսի 6-ին:

[26] Տե՛ս Պարսկաստանի Սահմանադրութեան հիմնական օրէնքները, Թաւրիզ, 1907, «Հ.Յ. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ)», Բ հատ., ուսումնասիրեց և խմբագրեց՝ **Ա. Ամուրեան**, Թեհրան, տպարան «Ալիք», 1979, էջ 55-56:

հարցերում անհրաժեշտ էր ձևավորել կոնսենսուս՝ իշխանության երեք թևերի միջև, որոնցից գործադիրի դերը սահմանադրությամբ վերապահված էր շահին: Ու քանի որ Մուհամմեդ Ալին՝ իր հարեմով հաստատվել էր **Օդեսայում**[27], իսկ նրա որդին դեռ չափահաս տարիքի չէր հասել, երկիրը կառավարվում էր շահի անունից, բայց ոչ նրա կողմից: Առավել ևս, որ դատական իշխանությունը Ղուրանի սկզբունքներով առաջնորդվող շիա հոգևորականության ձեռքում էր, որին խորթ էր բարեփոխումների քաղաքականությունը: Նման իրողությունը հաջորդական փակուղիների լաբիրինթոս էր ստեղծում՝ ճանապարհ բացելով միայն ուժային լուծումների համար, որոնք չէին կարող երկար տևել՝ մեծ տերությունների պարբերական միջամտությունների պատճառով:

Իրանը չուներ բազմահազարանոց կանոնավոր բանակ, իսկ նրա դերը կատարող՝ տարբեր ցեղախմբերին պատկանող աշխարհազորայինները իրենց մարտական որակներով զիջում էին օտարերկրացիներից բաղկացած ոչ մեծ զորաջոկատներին, որոնք լավ զինված էին և ունեին մարտական փորձ: Դրանց շարքում Եփրեմի, Քեռիի կամ՝ Դումանի գլխավորած խմբերն առանձնահատուկ դերակատարություն ունեին, քանի որ իրենց մարտական մեծ փորձի հետ միասին՝ հենվում էին նաև երկրի տեղանքն ու լեզուն իմացող իրանահայության մարդկային ներուժի վրա:

Բայց ՀՅ Դաշնակցությունը ևս հայտնվել էր խիստ հակասական դրության մեջ, ինչն անդրադառնում էր նրա շարքերի տրամադրությունների վրա: Երբ ուժեղանում էր դժգոհությունը թույլ ու անվճռական իշխանություններից, Թեհրանի («Շահաստանի») կենտրոնական կոմիտեն պահանջում էր Եփրեմ Դավթյանի հրաժարականը, սակայն ՀՅԴ զույգ Բյուրո-ները փորձում էին հաշտեցնել նրանց: Եփրեմ Դավթյանը թուլացող ու մարող հեղափոխության միակ անվրեպ բռունցքն էր, բայց նա չէր կարող կարգավորել երկրի տնտեսական դրությունը և վերջ տալ Պարսկաստանում պահպանվող և անգամ աճող գանձագողությանը:

Սահմանադրական հեղափոխության վերջին հանգրվանում մի պահ թվաց, թե գտնվել է Պարսկաստանի համար այդ հավերժական չարիքը հաղթահարելու դեղատոմսը: Երկրի տնտեսությունը ոտքի կանգնեցնելու և Պարսկաստանը ռուս-անգլիական մրցակցության ճի-

[27] Օդեսայում շահի ու նրա հարեմի արկածների մասին տե՛ս **Прохоров Е.**, В Одессе жил Персидский Шах https://stihi.ru/2019/06/05/104.

րանններից դուրս բերելու համար մեջլիսը երկար որոնումներից հետո կանգ առավ չեզոք երկիր համարվող և Իրանի հանդեպ աշխարհաքաղաքական նկրտումներ չունեցող ԱՄՆ-ի վրա: 1911 թ. փետրվարի 2 -ին որպես կառավարության ֆինանսական խորհրդական ու գլխավոր գանձապետ Պարսկաստան հրավիրվեց նման գործունեության մեծ փորձ ունեցող ամերիկացի **Ուիլյամ Մորգան Շուստերը**[28]:

Սակայն 1911 թ. մայիսին փորձագետների իր խմբով Թեհրան ժամանած Շուստերի առաքելությունը անմիջապես դժգոհություն առաջացրեց Իրանի հետամնացությունն իր ազդեցության պայմաններից մեկը համարող Ռուսաստանի իշխանությունների մոտ: Գրեթե նույն՝ ավանդական գաղութատիրության սկզբունքներով էր գործում նաև բրիտանական դիվանագիտությունը, որին անհանգստացնում էր միայն իր կայսերական թագի գոհարը համարվող Հնդկաստանի սահմաններին մոտենալու ռուսների ցանկությունը: Բայց Անտանտի զույգ դաշնակիցները համակարծիք էին հետամնաց, թույլ ու կախյալ Պարսկաստանի վերածնունդը կասեցնելու հարցում: Ուստի որպես բաց դռների ու տնտեսական լծակների վրա հիմնվող մրցակցության միջոցով սեփական ազդեցությունը տարածող երկրի՝ Միացյալ Նահանգների քաղաքականության արտահայտություն, Շուստերի առաքելությունը Պարսկաստանի Սահմանադրական հեղափոխությունը փրկելու միակ խաղաղ հնարավորությունն էր:

Տասնամյակներ շարունակ խորհրդային և ապա ռուսական պատմագրությունը հիմնավորապես կեղծել է այս առաքելության ու նրա ղեկավարի գործունեության պատմությունը՝ Շուստերին ներկայացնելով մե՛կ որպես գերմանական, մե՛կ՝ բրիտանական գործակալ, մինչդեռ՝ այդ սկզբունքային ու կոշտ վարչարարը իրականում լուրջ տնտեսագիտական ու իրավաբանական գիտելիքների տեր անձնավորություն էր, ով անկեղծորեն ցանկանում էր Պարսկաստանի վերածնունդը՝ որպես ժամանակակից պետություն: Դա է պատճառը, որ նա դարձավ նույն անշահախնդիր նպատակներով առաջնորդվող Եփրեմ Դավթյանի մեծ երկրպագուն: Ուիլյամ Մորգան Շուստերը որպես հմուտ կառավարիչ ու ֆինանսիստ, իսկ Եփրեմ Դավթյանը՝ որպես հերոս զինվորական, կարող էին դառնալ Պարսկաստանի վերածննդի զույգ հենասյուները, եթե անմիջապես չհանդիպեին երկրի պաշտոնեության ու ավատատերերի

[28] Ավելի մանրամասն տե՛ս **Макутчев А. В.**, Россия и миссия Моргана Шустера в Иран, Тульский научный вестник, Серия История. Языкознание, 2020, Выпуск N 2(2). https://cyberleninka.ru/article/n/rossiya-i-missiya-morgana-shustera-v-iran

հակազդեցությանը: Դրան գումարվեց ցարական իշխանությունների նրբորեն քողարկված քայլը՝ իբր թե ռուս սահմանապահների կողմից անուշադրության մատնված Մուհամմեդ Ալի շահի վերադարձը Պարսկաստան՝ կեղծ անձնագրով ու հանքային ջրով բեռնված նավով, որը, կրում էր «**Քրիստափոր**»[29] անվանումը:

Բայց 1911 թ. հուլիսի 17-ին իրենց ռևանշիստական նկրտումների մասին ազդարարած հակահեղափոխականների ժամանումը չխանգարեց Քրիստափորի զինակից Եփրեմ Դավթյանին՝ 1911 թ. սեպտեմբերյան դաժան մարտերում ջախջախելու հիմնականում՝ Մուհամմեդ Ալիի ցեղակիցներից (թուրքմեններից) բաղկացած խառնամբոխին, որին գլխավորում էր շահի եղբայրը: Հայ հերոսի հերթական հաղթանակից հետո՝ պատմական պահի գիտակցումով, Մորգան Շուստերը իր գլխարկը հանեց ու գլուխը խոնահեց մարտի դաշտից վերադարձած Եփրեմ Դավթյանի առջև: Դրանով նա հասկացնում էր, որ թեև իրենք գործում են տարբեր միջոցներով, բայց խորքում **կոչված են** ծառայելու նույն նպատակին՝ Իրանի ազատության ու վերածննդի գործին:

Բայց երբ Շուստերի հրահանգով Պարսկաստանի ֆինանսական ժանդարմերիան ներխուժեց արդեն իր արժանի պատիժը կրած շահի եղբոր պալատը՝ բռնագրավելու համար նրա ունեցվածքը, այնտեղ նրան դիմավորեցին ռուս կազակները և տեղի ունեցավ առավ մեծ աղմուկ հանած այն ընդհարումը, որը վերջնականապես բացահայտեց ինչպես Իրանի իրական բարեկամներին, այնպես էլ թշնամիներին: Անմիջապես սկիզբ առան ռուս-բրիտանական դիվանագիտական խորհրդակցություններ՝ Շուստերին Պարսկաստանից հեռանցելու խնդրի շուրջ, քանի որ վերջինս համարձակություն էր ունեցել երկրի ֆինանսական ոստիկանության գործունեությունը տարածելու Ռուսաստանի ազդեցության գոտի համարվող Ատրպատականում: Արդյունքում՝ ցարական կառավարությունը 1911 թ. նոյեմբերի 8 -ին խզելով դիվանագիտական հարաբերությունները՝ իր զորքերն ուղարկեց Պարսկաստան: Սակայն դրանից հետո էլ մեջլիսը շարունակում էր դիմադրել, ուստի ռուսների ճնշմամբ կառավարական ուժերը դեկտեմբերի 20-ին ստիպված էին ցրել մեջլիսը:

Մինչ այդ՝ 1911 թ. նոյեմբերի 29-ին, մի վերջնագիր էլ ուղարկվել էր Ուիլյամ Մորգան Շուստերին՝ Պարսկաստանից հեռանելու պահանջով, ինչը նույնպես բավարարվեց թույլ ու խոցելի կառավարության կողմից:

---

[29] Բաքվի նավթային շրջանում հաստատված հայ կապիտալի ներկայացուցիչները, որոնց մի մասը նաև Քրիստափոր Միքայելյանի նախկին զինակիցներն էին, հաճախ էին իրենց նավերն անվանակոչում Հայոց պատմության նվիրական դեմքերի անուններով:

Բրիտանական դիվանագիտության հետ համաձայնեցված՝ Ռուսաստանի նման քայլերով փաստորեն կյանքի կոչվեց Պարսկաստանը ազդեցության գոտիների բաժանելու մասին 1907 թվականի ռուս–անգլիական համաձայնագիրը:

Դրանից ակնհայտ էր դառնում, որ վաղ թե ուշ վճռվելու է նաև Պարսկաստանի ազատության վերջին մարտիկի ճակատագիրը: Բայց չնայած դրան՝ Եփրեմ Դավթյանը մինչև վերջ մնաց պատնեշի վրա՝ 1912 թ. մայիսի 6–ի նահատակությամբ դառնալով ազատության համար հայ և պարսիկ ժողովուրդների համատեղ պայքարի խորհրդանիշը:

Այսպիսով՝ Իրանի 1905–1912 թթ. Սահմանադրական հեղափոխության պատմության մեր հետահայաց (ռետրոսպեկտիվ) քննությունը լուսաբանում է արևելյան բռնապետության կապանքներից ազատագրվելու և առաջադիմության դժվարին ուղին բռնելու համար Պարսկաստանի քաղաքական վերնախավի լուսավորյալ հատվածի ու պարսիկ ժողովրդի անհավասար ու հերոսական պայքարի իրական՝ խորքային նպատակները: Ակնհայտ է դառնում, որ նոր ժամանակներում՝ լուսավորականության կենարար գաղափարների ազդեցությամբ այդ երկրում անխուսափելիորեն միմյանց բախվելու էին Աքեմենյան ու Սասանյան հարստությունների շրջանից հայտնի՝ **պատմական ամբողջի** կարևոր բաղկացուցիչ Պարսկաստանը՝ որպես համաշխարհային քաղաքակրթության կարևոր մաս ու միջնադարում Իրանի տարածքը ողողած թյուրքական ցեղերի ու նրանցից սերող Ղաջարների արքայատոհմի ստեղծած պարզունակ արևելյան բռնապետությունը: Քանի որ Իրանի բնիկ ժողովուրդները պահպանել էին հնդեվրոպացիներին բնորոշ՝ քաղաքակրթական տիպը և դրանից բխող ձգտումը դեպի լույս ու առաջադիմություն, նրանց աջակցություն ցուցաբերելու համար Պարսկաստանի եվրոպացի ու ամերիկացի բարեկամների ճամբարին միացավ նաև Սոցիալիստական ինտերնացիոնալին նոր միայն անդամագրված ՀՅ Դաշնակցությունը: Նրանց հակադրվող մեծապետական ուժերի և առաջին հերթին՝ ցարական բռնակալության՝ Պարսկաստանի վերածնունդը կանխելու փորձերը ծավալվեցին մի կողմից՝ Կովկասից «գործուղված» Ոստիկանության դեպարտամենտի կովկասյան թաթար ու վրացի գործակալների, իսկ մյուս կողմից՝ բացահայտ ռազմական ներխուժումների միջոցով: Արագ կողմնորոշվելով ստեղծված կացության մեջ՝ կովկասյան թաթարներին ներկայացնող գործիչները, կապվելով 1908–ին Օսմանյան կայսրությունում իշխանության եկած երիտթուրքերի հետ, ցարական իշխանությունների առաջադրանքները սպասարկելուն զուգահեռ աստիճանաբար թեքվեցին դե-

պի պանթյուրքիստների ճամբարը: Պարսկաստանի վերածնունդը կանխելու հարցում վերջիններիս նպատակները փաստորեն համընկնում էին ցարական բռնակալության ձգտումներին:

Ու թեև Իրանի 1905–1912 թթ. Սահմանադրական հեղափոխությունն ի վերջո պարտություն կրեց՝ ցարական Ռուսաստանի բիրտ ռազմաքաղաքական միջամտության արդյունքում, բայց խիստ թուլացած շահական իշխանությունը 1917-ի Ռուսական հեղափոխությունից ու Քաղաքացիական պատերազմից հետո զրկվելով իր արտաքին հենարանից՝ այլևս չէր կարող լուրջ դիմադրություն ցույց տալ **պարսիկ ժողովրդի** քաղաքական ինքնորոշման ձգտումներին, որոնք ի վերջո իրականություն դարձան ոչ թե հեղափոխական ցնցումների, այլ շահական արքայատոհմի փոփոխության միջոցով:

Գևորգ Ս. Խուդինյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայոց նոր պատմության առանցքային հարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅԴ պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ khoudinyan@yahoo.com

Summary

ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION IN THE POLITICAL SYSTEMS OF THE NEAR EAST AND EASTERN EUROPE AT THE END OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY

Part Six: The Arf's Connections and Relations With Iranian State Circles and The Revolutionary Underground During the Final Phase of the Constitutional Revolution

Gevorg S. Khoudinyan
Doctor of Historical Sciences

Key words- Revolutionary underground, Turkey, Persia, Yeprem Davtyan, Rostom, Vosuq ad-Dowleh, Seyyed Hassan Taghizadeh, Emin Rasulzadeh, Enver Bey, Odessa, William Morgan Shuster.

On the eve of the pivotal events of 1908-1909, which were crucial for the Constitutional Revolution in Iran, a debate unfolded within the Armenian Revolutionary Federation (ARF) Dashnaktsutyun regarding the party's participation in the ongoing internal political struggles in Turkey. The party's leader, Rostom, suspended his comrades' revolutionary activities in Turkey while simultaneously encouraging the extension of similar processes in Persia.

For the ARF Dashnaktsutyun, the establishment of solidarity with the Persian constitutionalists was tied not only to the objectives arising from the party's membership in the Socialist International but also to the recognition of the civilizational affinity between the two peoples. Meanwhile, the objectives of Russian imperialism and Pan-Turkists coincided on the matter of blockading and disrupting the prospects for Iran's revival. Consequently, during this same period, the activities of Social Democrats and other revolutionary groups representing the Caucasian Tatars in Persia were fueled not only by the Russian Police Department's intent to counterbalance the ARF Dashnaktsutyun's actions but also by Turkish authorities, who sought to establish their presence in certain regions of Atrpatakan (Azerbaijan).

This was compounded by the ARF Dashnaktsutyun's selfless support for the defense of Tabriz, led by Rostom and his associates, which culminated in the June 1909 victory of the Constitutional Revolution. Following this victory, during the formation of a new government, thanks to Yeprem Davtyan—known as the "Garibaldi of Persia"—the multinational revolutionary underground operating in the country began viewing the ARF Dashnaktsutyun and its leaders as military and political guarantors of the revolution's success. However, unlike the Dashnaktsutyun, figures representing the Caucasian Tatars continued their intrigues behind the back of the Persian Constitutional Revolution.

Էջեր հայագիտության, ՀՀ ԳԱԱ (ԳՀ) տարի, թիվ 4 (88), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2024

The Young Turks also became increasingly active, attempting to counterbalance the revolutionary movement unfolding in Iran. Recognizing the exceptional authority and influence of Yeprem Davtyan, Chief of Tehran Police, as a potential hindrance to their efforts, the Young Turks sought to win his favor and utilize his extraordinary military talent, inviting him to Turkey to participate in the Italo-Turkish War or the Libyan Campaign.

By the end of 1911, deepening contradictions between the ARF Dashnaktsutyun and the Young Turks, coupled with the perilous situation developing around Persia between 1910 and 1912, made it unthinkable for Yeprem to accept such an invitation. While constitutionalists heroically repelled the return of reactionary forces, Tsarist Russia and the British Empire hastened to solidify the 1907 agreement dividing Persia into spheres of influence.

As a result, the leadership of the Constitutional Revolution, relying on the determination of Persian patriots and ARF Dashnaktsutyun fighters assembled in the Majlis, made a decisive decision. On February 2, 1911, they invited American William Morgan Shuster to Persia as the government's financial adviser and chief treasurer. Shuster, a genuine supporter of Persian and Armenian revolutionaries and their heroic commander Yeprem Davtyan, played a pivotal role.

Although the subsequent attempt at revenge by Mohammad Ali Shah was thwarted by Yeprem Davtyan's detachments, which defeated the Shah's supporters and Turkmen tribesmen during the battles of September 1911, the Tsarist government, alarmed by Shuster's reforms, severed diplomatic relations and sent troops to Persia on November 8, 1911. The weak and vulnerable Iranian government was forced to concede to the Russo-British ultimatum of November 29, expelling Shuster from Persia and dissolving the Majlis on December 20.

It seemed as though the revolution had come to an end. However, as a symbol of the joint struggle of the Armenian and Persian peoples for freedom, Yeprem Davtyan continued his fight against reactionary forces until his martyrdom on May 6, 1912.

Резюме

АРФ ДАШНАКЦУТЮН В ПОЛИТИЧЕСКИХ СИСТЕМАХ СТРАН ПЕРЕДНЕЙ АЗИИ И ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ В КОНЦЕ XIX-НАЧАЛЕ XX ВВ.

Часть шестая. Связи и отношения АРФ Дашнакцутюн с государственными кругами и революционным подпольем Ирана на заключительном этапе Конституционной революции

Геворк С. Худинян
Доктор исторических наук

Ключевые слова – революционное подполье, Турция, Персия, Епрем Давтян, Ростом, Восуг-ад-Доуле, Сейид Хасан Тагизаде, Эмин Расулзаде Энвер-бей, Одесса, Уильям Морган Шустер.

Накануне событий 1908-1909 гг., имевших решающее значение для Конституционной революции в Иране, внутри АРФ Дашнакцутюн развернулась дискуссия по вопросу участия партии во внутриполитической борьбе в Турции и Иране. Лидер партии Ростом сдерживал революционную активность своих соратников в Турции, одновременно поощряя развертывание того же процесса в Персии. Для АРФ Дашнакцутюн установление тесной солидарности с персидскими конституционалистами была связана не только с задачами, вытекающими из факта членства партии в Социалистическом интернационале, но и с учетом фактора цивилизационного родства двух народов.

Между тем, в вопросе блокады перспектив возрождения Ирана, цели русских великодержавников и пантюркистов объективно совпадали. Поэтому, активизация отдельных социал-демократов, представляющих кавказских татар в Персии, в начале была продиктована Департаментом полиции царской России. Продолжая свои интриги за спиной Конституционной революции эти деятели (Эмин Расулзаде и др.) с течением времени стали сотрудничать также с младотурецкими властями.

Между тем, благодаря бескорыстной поддержке Ростома и сплоченных вокруг него дашнакцаканов, Атропатена и его центральный город Тебриз выстояли зимой 1908-1909 гг. а в июне 1909 г. под командованием Епрема Давтяна была одержана решающая победа Конституционной революции в Тегеране.

После этого, в период формирования новой власти в Иране, действующее в этой стране многонациональное революционное подполье стало рассматривать АРФ Дашнакцутюн военно-политическим гарантом победы Конституционной революции.

Активизировались и младотурки, которые также пытались взять под свой контроль революционное движение, разворачивающееся в Иране. И поскольку в этом деле им мешала исключительное положение и авторитет начальника полиции Тегерана Епрема Давтяна, младотурки в лице Энвер бея пытались заискиваться перед армянским коман-

диром и использовать его исключительный военный талант, пригласив в Турцию для участия в Ливийской или итало-турецкой войне. По причине обострения противоречий между АРФ Дашнакцутюн и младотурками в конце 1911 г. и, особенно, из-за крайне опасной ситуации, сложившейся вокруг Персии в 1910-1912 годах, Епрем не мог даже подумать о таком шаге.

В то время, как иранские конституционалисты героическими усилияи сорвали попытки реставрации неограниченной шахской власти, царская Россия и Британская империя поспешили закрепить на земле соглашение о разделе Персии на зоны влияния 1907 года. В результате этого, руководство Конституционной революции, 2 февраля 1911 г. приняло решение пригласить в Персию в качестве финансового советника и главного казначея американца Уильяма Моргана Шустера, который искренне сочувствовавал персидским и армянским революционерам и их героическому командиру Епрему Давтяну.

И несмотря на то, что последовавшая за этим попытка реставрации шахской власти была сорвана усилиями Епрема Давтяна, в сентябрьских боях 1911 г., разгромившего отряды туркмен - соплеменников шаха Мухаммеда Али, обеспокоенное реформами Уильяма Моргана Шустера царское правительство 8 ноября 1911 г., разорвав дипломатические отношения, направило свои войска в Персию. Слабое и уязвимое иранское правительство было вынуждено отступить перед российско-британским ультиматумом от 29 ноября о высылке Уильяма Моргана Шустера из Персии и распустить Меджлис. Казалось, на этом революция закончилась, но символ совместной борьбы за свободу армянского и персидского народов, Епрем Давтян продолжил неравную борьбу вплоть до своей мученической смерти 6 мая 1912 г.

Օգտագործված գրականություն

1. **Ռոստոմ**, Նամականի: Մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999:
2. «Ռոստոմի անտիպ նամակները», հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպուքեանի, Եր., «Լուսակն», 2012:
3. Հ.Յ. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ), Ա հատ., ուսումնասիրեց և խմբագրեց՝ Ա. Ամուրեան, Թեհրան, տպարան «Ալիք», 1976:
4. Պարսկաստանի Սահմանադրութեան հիմնական օրէնքները, Թաւրիզ, 1907, «Հ.Յ. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ)», Բ հատ., ուսումնասիրեց և խմբագրեց՝ Ա. Ամուրեան, Թեհրան, տպարան «Ալիք», 1979:
5. **Макутчев А. В**. Россия и миссия Моргана Шустера в Иран, «Тульский научный вестник», Серия История. Языкознание. 2020. Выпуск N 2(2). https://cyberleninka.ru/article/n/rossiya-i-missiya-morgana-shustera-v-iran
6. **Насиман Ягублу**, Деятельность Мамед Эмина Расулзаде в Иране, «Зеркало», Баку, 28 мая 2011.
7. **Прохоров Е., В Одессе жил Персидский Шах**, https://stihi.ru/2019/06/05/104

REFERENCE

1. **Ṛostom**, Namakani: Mahuan ut'sunameakin aṛt'iv, Peyrut', 1999 **(In Armenian).**
2. “Ṛostomi antip namaknerĕ”, hratarakut’ean patrastut’yun, khmbagrut’iwn yev tsanot’agrut’iwnner, Yeruand P’ampuk’eani, Yer., “Lusakn”, 2012 **(In Armenian).**
3. HY Dashnakts’ut’yun, Yep’rem, Parskakan sahmanadrut’yun (HYD Kentronakan arkhiv), A hat., usumnasirets’ yev khmbagrets’, **A. Amurean,** T’ehran, tparan Alik’, 1976 **(In Armenian).**
4. Parskastani Sahmanadrutean himnakan orenqnerĕ. T’avriz, 1907 in “H. Y. Dashakcuty’un. Yep’rem. Parskakan sahmanadrutyun (HYD Kentronakan arkhiv)”, B hat. usumnasirets yev khmbagrets` A. Amurean, T’ehran, tparan “Aliq»”, 1979 **(In Armenian).**
5. **Prokhorov Ye**., V odesse zhil Persidkiy Shakh, https://stihi.ru/2019/06/05/104 **(In Russian).**
6. **Mekutchev A. V**., Rossiya I missiya Morgana Shustera v Iran, Tul’skiy nauchny’y vestnik, seriya Istoriya. Yazy’koznanie. 2020. Vy’pusk N2(2). https://cyberleninka.ru/article/n/rossiya-i-missiya-morgana-shustera-v-iran **(In Russian).**
7. **Yaghublu N.,** Deyatel'nost' Mamed Ēmina Ṛasulzade v Irane, “Zerkalo”, Baku, 2011, 28 maya **(In Russian).**